ամսի[1] կիսին հինգշաբթի օրը 5000 մարդով,[2] նշանակելով առաջապահ զօրքի վերայ Մայսար Ի. Մասրուք ալ-Աբսին, աջ թեւի վերայ՝ Սայիդ Ի. Ամիր Ի. Հիզայմ ալ-Ջումահին, իսկ ձախ թեւի վերայ՝ Սաֆվան Ի. Մուատտալ ալ-Սուլամիին. Խալիդ Ի. ալ-Վալիդ ձախ թեւի ճակատին էր. այլք կը պնդեն սակայն, որ Խալիդ Աբու Օբայդայից յետ այլ եւս ոչ մի դրօշի տակ պատերազմ չէր եղած, այլ կը մնար Հիմսում, ուր նա վախճանեցաւ 21 թ., նշանակելով Օմարին իրեն կատակատար. ըստ այլոց նա մեռաւ Մեդինայում, սակայն առաջին տեղեկութիւնն աւելի ճիշտ է:

Իյադի առաջապահ գունդը հասաւ մինչեւ Ռաքքայ, յարձակեցաւ քաղաքի շրջակայքում բնակող խաշնարածների եւ երկրագործների վերայ եւ տարաւ իւր հետ աւար. սոքա փախան, ով կարողացաւ, եւ մտան քաղաք: Իյադ մերձեցաւ իւր զօրքով Ռաքքային եւ բանակեցաւ Ուռհայի դրանց հանդէպ (քաղաքի դռներից մէկն է, որ իբրեւ զօրանոց կը ծառայէ). բնակիչք մի ժամ շարուանակ կը նետաձգէին, մինչեւ որ մուսլիմներից ոմանք վերաւորեցան. սոքա այնտեղից յետ մղեցան, որպէս զի թշնամու նետեր եւ քարեր նոցա չհասնին, պարտեցան քաղաքի շուրջը եւ դրին դրանց հանդէպ հեծելազօր գունդեր: Իյադ եկաւ իւր զօրքի մօտ եւ ուղարկեց հեծելազօր, որ գիւղերից գերիներ եւ մեծ քանակութեամբ ուտելիք բերին: Հունձքը հասել էր. 5 կամ 6 օրից յետ քաղաքի իշխանը (պատրիկը) ուղարկեց Իյադի մօտ՝ խաղաղութիւն խնդրելու. Իյադ հաշտութիւն կապեց նորա հետ այն հիման վերայ, որ քաղաքի բոլոր բնակիչք, նոցա կնանքը, գոյքը, արտերը եւ քա-

---

1 Մահմեդականաց 8րդ ամիսն է:

2 Եթէ ճիշտ է այս թուականն, Հայոց Միջագետաց նուաճումն կարող էր 639 թ. ոչ շուտ տեղի ունենալ: